



Կադաստրի
կոմիտե

Անշարժ գույքի շուկայի վերլուծություն

2023 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե
www.cadastre.am

Բովանդակություն

1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	3
1.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն	3
1.2	Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն	10
1.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն	14
2	ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	16
2.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն	16
3	ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	21
3.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն	21
3.2	Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն	25
3.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն	27
3.4	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն	29
3.5	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն	32
3.6	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն	37
3.7	Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն	43
4	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	47
4.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն	50
4.2	Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն	55
4.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն	57
5	ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	59
5.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն	59
5.2	Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն	63
5.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն	66

5.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված հիփոթեքային գրավադրման գործարքների վերլուծություն.....	67
Հավելված 1.....	73
Հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքներն ըստ գործարքի տեսակի.....	73
Հավելված 2.....	75
Հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքներն ըստ գույքի տեսակի.....	75
Հավելված 3.....	77
Հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքներն ըստ գույքի տեսակի.....	77
Հավելված 4.....	79
Հանրապետությունում իրականացված վարձակալության գործարքներն ըստ գույքի տեսակի.....	79
Հավելված 5.....	81
Հանրապետությունում իրականացված գրավադրման գործարքներն ըստ գույքի տեսակի.....	81

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2023 թվականի չորրորդ եռամսյակում (վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է՝ հիմք ընդունելով 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները և անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները:


1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 62,035 իրավունքի պետական գրանցման գործարք:

2010-2023 թվականների չորրորդ եռամսյակների անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են Գծապատկեր 1.1-1-ում.


Գծապատկեր 1.1-1




1.1.2 Հանրապետությունում 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 27.1%, իսկ առավել ցածրը՝ Վայոց ձորի մարզում՝ 2.6%:

Գծապատկեր 1.1-2-ում և Գծապատկեր 1.1-3-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի:

Գծապատկեր 1.1-2



Գծապատկեր 1.1-3




Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-1

	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
Երևան	16,675	0.7%	16,784	10.2%	15,236
Արագածոտն	3,590	29.9%	4,663	25.0%	3,729
Արարատ	4,684	23.2%	5,770	17.3%	4,920
Արմավիր	5,303	10.6%	5,864	19.6%	4,902
Գեղարքունիք	3,091	31.7%	4,071	30.3%	3,125
Լոռի	3,502	17.8%	4,125	24.2%	3,320
Կոտայք	9,542	11.7%	10,655	2.5%	10,392
Շիրակ	2,977	-5.6%	2,811	9.7%	2,563
Սյունիք	2,149	17.1%	2,516	16.1%	2,167
Վայոց ձոր	1,057	50.3%	1,589	34.3%	1,183
Տավուշ	2,527	26.1%	3,187	24.2%	2,566
Հանրապետություն	55,097	12.6%	62,035	14.66%	54,103

Գծապատկեր 1.1-4-ում ներկայացված է 2010-2023 թվականների չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ըստ Երևան քաղաքի, մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի:

Գծապատկեր 1.1-4




2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2023 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 14.7 %-ով, իսկ 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 12.6 %-ով: Երևան քաղաքում 2023 թվականի չորրորդ եռամսյակում գրանցված գործարքների քանակը 2023 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 10.2 %-ով, իսկ 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 0.7 %-ով: Մարզերի քաղաքային բնակավայրերում 2023 թվականի չորրորդ եռամսյակում գրանցված գործարքների քանակը 2023 թվականի երրորդ եռամսյակների համեմատ աճել է 12.1 %-ով, 2022 թվականի չորրորդ եռամսյակների համեմատ է 18.6 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2023 թվականի չորրորդ եռամսյակում գրանցված գործարքների քանակը 2023 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 18.8 %-ով, 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 17.4 %-ով:


1.1.3 Հանրապետությունում 2023 թվականի չորրորդ եռամսյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 35.7 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 2.0 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-5-ում և Գծապատկեր 1.1-6-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.1-5



Հանրապետությունում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների



	Օտարում	Վարձակալություն	Գրավադրում	Ժառանգություն	Օրինականացում	Առաջնային գրանցում	Վերագրանցում
2022թ. չորրորդ եռամսյակ	20488	2969	7398	11020	813	7329	5080
2023թ. չորրորդ եռամսյակ	22121	3134	7746	11684	1227	10223	5900
2023թ. երրորդ եռամսյակ	20108	2619	7147	9519	988	8871	4851

Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-2

Ը/Ը	Գործարքի տեսակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
1	Օտարում	20,488	8.0%	22,121	10.0%	20,108
1ա	Առուվաճառք	13,021	7.6%	14,008	13.7%	12,323
1բ	Նվիրատվություն	6,893	6.0%	7,304	3.1%	7,087
1գ	Փոխանակում	62	2.3 անգամ	142	44.9%	98
1դ	Օտարման այլ տեսակ	512	30.3%	667	11.2%	600
2	Վարձակալություն	2,969	5.6%	3,134	19.7%	2,619
3	Գրավադրում	7,398	4.7%	7,746	8.4%	7,147
4	Ժառանգություն	11,020	6.0%	11,684	22.7%	9,519
5	Օրինականացում	813	50.9%	1,227	24.2%	988
6	Առաջնային գրանցում	7,329	39.5%	10,223	15.2%	8,871
7	Պետգր. /վերագրանցում/	5,080	16.1%	5,900	21.6%	4,851
	Ընդամենը /գործարք/	55,097	12.6%	62,035	14.7%	54,103

Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.


Աղյուսակ 1.1-3

Գործարքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Օտարում	22,121	35.7%	5,975	35.6%	27.0%	5,932	37.7%	26.8%	10,214	34.6%	46.2%
1ա	Առուվաճառք	14,008	22.6%	3,611	21.5%	25.8%	3,971	25.2%	28.3%	6,426	21.8%	45.9%
1բ	Նվիրատվություն	7,304	11.8%	2,095	12.5%	28.7%	1,754	11.1%	24.0%	3,455	11.7%	47.3%
1գ	Փոխանակում	142	0.2%	56	0.3%	39.4%	26	0.2%	18.3%	60	0.2%	42.3%
1դ	Օտարման այլ տեսակ	667	1.1%	213	1.3%	31.9%	181	1.2%	27.1%	273	0.9%	40.9%
2	Վարձակալություն	3,134	5.1%	1,937	11.5%	61.8%	600	3.8%	19.1%	597	2.0%	19.0%
3	Գրավադրում	7,746	12.5%	3,557	21.2%	45.9%	2,207	14.0%	28.5%	1,982	6.7%	25.6%
4	Ժառանգություն	11,684	18.8%	1,926	11.5%	16.5%	2,410	15.3%	20.6%	7,348	24.9%	62.9%
5	Օրինականացում	1,227	2.0%	146	0.9%	11.9%	403	2.6%	32.8%	678	2.3%	55.3%
6	Առաջնային գրանցում	10,223	16.5%	1,929	11.5%	18.9%	2,960	18.8%	29.0%	5,334	18.1%	52.2%
7	Պետգր. /վերագրանցում/	5,900	9.5%	1,314	7.8%	22.3%	1,219	7.7%	20.7%	3,367	11.4%	57.1%
Ընդամենը /գործարք/		62,035	100.0%	16,784	100.0%	27.1%	15,731	100.0%	25.4%	29,520	100.0%	47.6%


1.1.4 Հանրապետությունում 2023 թվականի չորրորդ եռամսյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 39.2 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 2.0 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-7-ում և Գծապատկեր 1.1-8-ում ներկայացված են 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.1-7



Հանրապետությունում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-4

Ը/Ը	Գույքի տեսակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
1	Բնակարան	14,621	-0.2%	14,586	8.3%	13,469
2	Անհատական բնակելի տուն	11,969	19.9%	14,345	14.7%	12,510
3	Արտադրական նշ. շին	1,165	6.9%	1,245	20.6%	1,032
4	Հասարակական նշ. շին.	4,110	14.4%	4,701	14.0%	4,122
5	Ավտոտնակ	1,604	75.2%	2,811	47.1%	1,911
6	Հող	21,628	12.6%	24,347	15.6%	21,059
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	13,407	2.7%	13,767	15.9%	11,883
Ընդամենը		55,097	12.6%	62,035	14.7%	54,103

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.


Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	14,586	23.5%	8,903	53.0%	61.0%	5,106	32.5%	35.0%	577	2.0%	4.0%
2	Անհատական բնակելի տուն	14,345	23.1%	2,448	14.6%	17.1%	3,516	22.4%	24.5%	8,381	28.4%	58.4%
3	Արտադրական նշ. շին	1,245	2.0%	358	2.1%	28.8%	303	1.9%	24.3%	584	2.0%	46.9%
4	Հասարակական նշ. շին.	4,701	7.6%	2,618	15.6%	55.7%	1,468	9.3%	31.2%	615	2.1%	13.1%
5	Ավտոտնակ	2,811	4.5%	1,311	7.8%	46.6%	1,395	8.9%	49.6%	105	0.4%	3.7%
6	Հող	24,347	39.2%	1,146	6.8%	4.7%	3,943	25.1%	16.2%	19,258	65.2%	79.1%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	13,767	22.2%	233	1.4%	1.7%	1,229	7.8%	8.9%	12,305	41.7%	89.4%
Ընդամենը /գործարք/		62,035	100.0%	16,784	100.0%	27.1%	15,731	100.0%	25.4%	29,520	100.0%	47.6%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Արաբկիր՝ 18.5 %, իսկ ցածրը՝ 0.8 %, Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Երևան քաղաքում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների




Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ:

Աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
Դավթաշեն	859	12.0%	962	50.1%	641
Էրեբունի	1,254	-9.4%	1,136	15.3%	985
Աջափնյակ	1,417	6.8%	1,513	-19.1%	1,871
Ավան	642	-2.6%	625	15.1%	543
Արաբկիր	2,651	16.9%	3,100	32.4%	2,341
Կենտրոն	3,012	0.1%	3,014	6.0%	2,843
Մալաթիա-Սեբաստիա	1,808	-3.2%	1,751	11.5%	1,570
Քանաքեռ-Զեյթուն	1,086	-20.0%	869	-14.2%	1,013
Շենգավիթ	1,813	-5.9%	1,706	11.3%	1,533
Նոր Նորք	1,696	-1.7%	1,667	19.4%	1,396
Նորք-Մարաշ	312	-1.9%	306	-19.3%	379
Նուբարաշեն	125	8.0%	135	11.6%	121
Երևան	16,675	0.7%	16,784	10.2%	15,236

1.2.2 Երևան քաղաքում 2023 թվականի չորրորդ եռամսյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 35.6 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.9 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ:


Աղյուսակ 1.2-2

Ը/Ը	Գործարքի տեսակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
1	Օտարում	6,638	-10.0%	5,975	4.6%	5,714
1ա	Առուվաճառք	4,300	-16.0%	3,611	3.9%	3,477
1բ	Նվիրատվություն	2,134	-1.8%	2,095	1.9%	2,055
1գ	Փոխանակում	35	60.0%	56	2.5 անգամ	22
1դ	Օտարման այլ տեսակ	169	26.0%	213	33.1%	160
2	Վարձակալություն	1,570	23.4%	1,937	26.7%	1,529
3	Գրավադրում	3,537	0.6%	3,557	10.1%	3,231
4	Ժառանգություն	2,229	-13.6%	1,926	10.4%	1,745
5	Օրինականացում	159	-8.2%	146	-28.8%	205
6	Առաջնային գրանցում	1,250	54.3%	1,929	9.8%	1,757
7	Պետգր. /վերագրանցում/	1,292	1.7%	1,314	24.5%	1,055
	Ընդամենը /գործարք/	16,675	0.7%	16,784	10.2%	15,236

1.2.3 Երևան քաղաքում 2023 թվականի չորրորդ եռամսյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 53.0 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 2.1%՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Երևան քաղաքում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-3


Ը/Ը	Գույքի տեսակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
1	Բնակարան	9,385	-5.1%	8,903	7.8%	8,258
2	Անհատական բնակելի տուն	2,580	-5.1%	2,448	6.8%	2,293
3	Արտադրական նշ. շին	356	0.6%	358	0.0%	358
4	Հասարակական նշ. շին.	2,272	15.2%	2,618	19.9%	2,184
5	Ավտոտնակ	909	44.2%	1,311	30.4%	1,005
6	Հող	1,173	-2.3%	1,146	0.7%	1,138
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	183	27.3%	233	9.9%	212
Ընդամենը		16,675	0.7%	16,784	10.2%	15,236

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 2023 թվականի չորրորդ եռամսյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 35.7 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 2.4 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.3-1



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ:


Աղյուսակ 1.3-1

Ը/Ը	Գործարքի տեսակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
1	Օտարում	13,850	16.6%	16,146	12.2%	14,394
1ա	Առուվաճառք	8,721	19.2%	10,397	17.5%	8,846
1բ	Նվիրատվություն	4,759	9.5%	5,209	3.5%	5,032
1գ	Փոխանակում	27	3.2 անգամ	86	13.2%	76
1դ	Օտարման այլ տեսակ	343	32.4%	454	3.2%	440
2	Վարձակալություն	1,399	-14.4%	1,197	9.8%	1,090
3	Գրավադրում	3,861	8.5%	4,189	7.0%	3,916
4	Ժառանգություն	8,791	11.0%	9,758	25.5%	7,774
5	Օրինականացում	654	65.3%	1,081	38.1%	783
6	Առաջնային գրանցում	6,079	36.4%	8,294	16.6%	7,114
7	Պետգր. /վերագրանցում/	3,788	21.1%	4,586	20.8%	3,796
	Ընդամենը /գործարք/	38,422	17.8%	45,251	16.4%	38,867

1.3.2 Մարզերում 2023 թվականի չորրորդ եռամսյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 51.3 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 2.0 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-2-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.3-2



Աղյուսակ 1.3-2-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-2

Ը/Ը	Գույքի տեսակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
1	Բնակարան	5,236	8.5%	5,683	9.1%	5,211
2	Անհատական բնակելի տուն	9,389	26.7%	11,897	16.4%	10,217
3	Արտադրական նշ. շին.	809	9.6%	887	31.6%	674
4	Հասարակական նշ. շին.	1,838	13.3%	2,083	7.5%	1,938
5	Ավտոտնակ	695	2.2 անգամ	1,500	65.6%	906
6	Հող	20,455	13.4%	23,201	16.5%	19,921
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	13,224	2.3%	13,534	16.0%	11,671
Ընդամենը		38,422	17.8%	45,251	16.4%	38,867


2 ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 22,121 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 35.7 %-ը:

2010-2023 թվականների չորրորդ եռամսյակների անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 2.1-1-ում:


Գծապատկեր 2.1-1




2.1.2 Հանրապետությունում 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 27.0 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 2.3 %՝ Վայոց ձորի մարզում:

Գծապատկեր 2.1-2-ում և Գծապատկեր 2.1-3-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի:

Հանրապետությունում օտարման գործարքների տոկոսային բաշխվածությունը



Հանրապետությունում օտարման գործարքների քանակական բաշխվածությունը



Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 2.1-1


	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
Երևան	6,638	-10.0%	5,975	4.6%	5,714
Արագածոտն	1,419	20.7%	1,713	23.6%	1,386
Արարատ	1,805	21.2%	2,187	22.3%	1,788
Արմավիր	2,051	13.6%	2,329	22.4%	1,903
Գեղարքունիք	917	34.1%	1,230	11.5%	1,103
Լոռի	1,178	19.9%	1,413	19.2%	1,185
Կոտայք	3,687	5.8%	3,901	-3.7%	4,050
Շիրակ	1,055	-10.9%	940	-0.2%	942
Սյունիք	565	46.4%	827	8.0%	766
Վայոց ձոր	364	41.8%	516	38.3%	373
Տավուշ	809	34.7%	1,090	21.4%	898
Հանրապետություն	20,488	8.0%	22,121	10.0%	20,108

2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2023 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 10.0 %-ով, 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 8.0 %-ով, Երևան քաղաքում 2023 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 4.6 %-ով, 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 10.0 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2023 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 11.0 %-ով, 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 20.7 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2023 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 12.8 %-ով, 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 14.3 %-ով:


2.1.3 Հանրապետությունում 2023 թվականի չորրորդ եռամսյակում օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 42.6 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.1 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 2.1-4-ում և Գծապատկեր 2.1-5-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Հանրապետությունում օտարման գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Հանրապետությունում օտարման գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Աղյուսակ 2.1-2

Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	6,004	27.1%	3,654	61.2%	60.9%	2,121	35.8%	35.3%	229	2.2%	3.8%
2	Անհատական բնակելի տուն	4,233	19.1%	749	12.5%	17.7%	1,053	17.8%	24.9%	2,431	23.8%	57.4%
3	Արտադրական նշ. շին	253	1.1%	54	0.9%	21.3%	60	1.0%	23.7%	139	1.4%	54.9%
4	Հասարակական նշ. շին.	847	3.8%	404	6.8%	47.7%	334	5.6%	39.4%	109	1.1%	12.9%
5	Ավտոտնակ	1,361	6.2%	697	11.7%	51.2%	634	10.7%	46.6%	30	0.3%	2.2%
6	Հող	9,423	42.6%	417	7.0%	4.4%	1,730	29.2%	18.4%	7,276	71.2%	77.2%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	4,936	22.3%	84	1.4%	1.7%	478	8.1%	9.7%	4,374	42.8%	88.6%
Ընդամենը /գործարք/		22,121	100.0%	5,975	100.0%	27.0%	5,932	100.0%	26.8%	10,214	100.0%	46.2%

Գծապատկեր 2.1-6-ում և Աղյուսակ 2.1-3-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

Գծապատկեր 2.1-6



Աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Մարզեր	Ընդամենը
Առուվաճառք	3,611	1,230	1,415	1,585	556	895	2,721	577	512	316	590	10,397	14,008
Նվիրատվություն	2,095	423	733	701	518	418	1,092	354	298	196	476	5,209	7,304
Փոխանակում	56	11	11	9	0	7	39	3	0	0	6	86	142
Օտարման այլ տեսակ	213	49	28	34	156	93	49	6	17	4	18	454	667
Ընդամենը	5,975	1,713	2,187	2,329	1,230	1,413	3,901	940	827	516	1,090	16,146	22,121


3 ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 14,008 գործարք:


2010-2023 թվականների չորրորդ եռամսյակների անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 3.1-ում.

Գծապատկեր 3.1-1




3.1.2 Հանրապետությունում 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 25.8 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 2.3 %՝ Վայոց ձորի մարզում :

Գծապատկեր 3.1-2-ում և Գծապատկեր 3.1-3-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.



Գծապատկեր 3.1-3




Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-1

	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
Երևան	4,300	-16.0%	3,611	3.9%	3,477
Արագածոտն	1,009	21.9%	1,230	34.0%	918
Արարատ	1,101	28.5%	1,415	27.2%	1,112
Արմավիր	1,396	13.5%	1,585	30.1%	1,218
Գեղարքունիք	382	45.5%	556	29.3%	430
Լոռի	642	39.4%	895	22.8%	729
Կոտայք	2,578	5.5%	2,721	-2.4%	2,787
Շիրակ	595	-3.0%	577	7.1%	539
Սյունիք	318	61.0%	512	6.2%	482
Վայոց ձոր	236	33.9%	316	47.7%	214
Տավուշ	464	27.2%	590	41.5%	417
Հանրապետություն	13,021	7.6%	14,008	13.7%	12,323

Գծապատկեր 3.1-4-ում ներկայացված է 2010-2023 թվականների սեպտեմբեր ամսվա անշարժ գույքի նկատմամբ առուվաճառքի գրանցումների քանակները ըստ Երևան քաղաքի, մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի.

Գծապատկեր 3.1-4




2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2023 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 13.7 %-ով, 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 7.6 %-ով, Երևան քաղաքում 2023 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 3.9 %-ով, 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 16.0 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2023 թվականի

երրորդ եռամսյակի համեմատ աճել է 20.1 %-ով, 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 27.5 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2023 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 16.0 %-ով, 2022 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 14.6 %-ով:


3.1.3 Հանրապետությունում 2023 թվականի չորրորդ եռամսյակում առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 46.4 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.2 %, արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-5-ում և Գծապատկեր 3.1-6-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.1-5



Գծապատկեր 3.1-6



Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-2


Հ/Հ	Գույքի տեսակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
1	Բնակարան	4,069	-16.1%	3,415	-0.4%	3,427
2	Անհատական բնակելի տուն	1,785	20.1%	2,144	5.3%	2,037
3	Արտադրական նշ. շին	142	21.8%	173	33.1%	130
4	Հասարակական նշ. շին.	504	13.5%	572	9.6%	522
5	Ավտոտնակ	725	65.5%	1,200	60.2%	749
6	Հող	5,796	12.2%	6,504	19.2%	5,458
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	3,250	-2.4%	3,172	13.2%	2,803
Ընդամենը		13,021	7.6%	14,008	13.7%	12,323

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 22.1 %, արձանագրվել է Արարկիր, իսկ առավել ցածրը՝ 1.0 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

Երևան քաղաքում առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների



Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ:


Աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
Դավթաշեն	302	-57.0%	130	-16.1%	155
Էրեբունի	259	-17.4%	214	15.1%	186
Աջափնյակ	315	-0.3%	314	-50.0%	628
Ավան	157	-12.7%	137	47.3%	93
Արաբկիր	888	-10.2%	797	39.3%	572
Կենտրոն	771	-28.9%	548	6.2%	516
Մալաթիա-Մեքաստիա	393	2.5%	403	40.9%	286
Քանաքեռ-Զեյթուն	304	-33.6%	202	-38.6%	329
Շենգավիթ	352	-11.4%	312	12.2%	278
Նոր Նորք	441	-5.4%	417	26.7%	329
Նորք-Մարաշ	93	9.7%	102	24.4%	82
Նուբարաշեն	25	40.0%	35	52.2%	23
Երևան	4,300	-16.0%	3,611	3.9%	3,477

3.2.2 Երևան քաղաքում 2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 56.3 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.0 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.2-2


Ը/Ը	Գույքի տեսակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
1	Բնակարան	2,788	-27.1%	2,033	-6.7%	2,180
2	Անհատական բնակելի տուն	460	-18.7%	374	4.2%	359
3	Արտադրական նշ. շին	33	9.1%	36	-2.7%	37
4	Հասարակական նշ. շին.	281	-6.4%	263	9.1%	241
5	Ավտոտնակ	457	28.7%	588	47.4%	399
6	Հող	281	12.8%	317	21.5%	261
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	38	63.2%	62	17.0%	53
Ընդամենը		4,300	-16.0%	3,611	3.9%	3,477

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2023 թվականի չորրորդ եռամսյակում առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 59.5 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.3 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.3-1

Ը/Ը	Գույքի տեսակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
1	Բնակարան	1,281	7.9%	1,382	10.8%	1,247
2	Անհատական բնակելի տուն	1,325	33.6%	1,770	5.5%	1,678
3	Արտադրական նշ. շին	109	25.7%	137	47.3%	93
4	Հասարակական նշ. շին.	223	38.6%	309	10.0%	281
5	Ավտոտնակ	268	2.3 անգամ	612	74.9%	350
6	Հող	5,515	12.2%	6,187	19.0%	5,197
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	3,212	-3.2%	3,110	13.1%	2,750
Ընդամենը		8,721	19.2%	10,397	17.5%	8,846


3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի 1,648 առուվաճառքի գործարքների կողմ հանդիսացել են իրավաբանական անձինք, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 11.8 %-ը :

Վերոնշյալ առուվաճառքի գործարքներից 466-ի դեպքում իրավաբանական անձինք հանդիսացել են միայն գնորդ, 1,041-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 141 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են իրավաբանական անձինք:

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված են իրավաբանական անձանց կողմից 2023 թվականի չորրորդ եռամսյակում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունները.


Գծապատկեր 3.4-1




Արդյունքում 2023 թվականի չորրորդ եռամսյակում իրավաբանական անձինք գնել են 607 միավոր անշարժ գույք և վաճառել են 1,182 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է իրավաբանական անձանց կողմից 2023 թվականի չորրորդ եռամսյակում գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.4-3-ում՝ իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Իրավաբանական անձանց կողմից գնված գույքերի բաշխվածությունը ըստ տեսակների



Իրավաբանական անձանց կողմից վաճառված գույքերի բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ Երևանի և մարզերի:

Աղյուսակ 3.4-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	3,611	165	27.2%	4.6%	894	75.6%	24.8%
Արագածոտն	1,230	68	11.2%	5.5%	24	2.0%	2.0%
Արարատ	1,415	39	6.4%	2.8%	39	3.3%	2.8%
Արմավիր	1,585	67	11.0%	4.2%	50	4.2%	3.2%
Գեղարքունիք	556	48	7.9%	8.6%	16	1.4%	2.9%
Լոռի	895	32	5.3%	3.6%	37	3.1%	4.1%
Կոտայք	2,721	81	13.3%	3.0%	79	6.7%	2.9%
Շիրակ	577	9	1.5%	1.6%	17	1.4%	2.9%
Սյունիք	512	25	4.1%	4.9%	18	1.5%	3.5%
Վայոց Ձոր	316	36	5.9%	11.4%	4	0.3%	1.3%
Տավուշ	590	37	6.1%	6.3%	4	0.3%	0.7%
Հանրապետություն	14,008	607	100.0%	4.3%	1,182	100.0%	8.4%

Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ եռամսյակի նկատմամբ:

Աղյուսակ 3.4-2

	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք					Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք				
	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
Երևան	220	-25.0%	165	17.9%	140	895	-0.1%	894	-2.2%	914
Արագածոտն	99	-31.3%	68	21.4%	56	14	71.4%	24	33.3%	18
Արարատ	31	25.8%	39	50.0%	26	18	2.2 անգամ	39	69.6%	23
Արմավիր	74	-9.5%	67	-25.6%	90	30	66.7%	50	19.0%	42
Գեղարքունիք	27	77.8%	48	-35.1%	74	19	-15.8%	16	-36.0%	25
Լոռի	18	77.8%	32	-13.5%	37	15	2.5 անգամ	37	68.2%	22
Կոտայք	100	-19.0%	81	32.8%	61	108	-26.9%	79	-16.0%	94
Շիրակ	10	-10.0%	9	-18.2%	11	16	6.3%	17	3.4 անգամ	5
Սյունիք	12	2.1 անգամ	25	92.3%	13	3	6.0 անգամ	18	2.3 անգամ	8
Վայոց Ձոր	27	33.3%	36	20.0%	30	0	4-ով ավել	4	4.01 անգամ	1
Տավուշ	23	60.9%	37	68.2%	22	14	-71.4%	4	-50.0%	8
Հանրապետություն	641	-5.3%	607	8.4%	560	1,132	4.4%	1,182	1.9%	1,160

Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների:

Աղյուսակ 3.4-3

Գույքի տեսակ	Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք			
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	
1	Բնակարան	3,415	29	4.8%	0.8%	470	39.8%	13.8%
2	Անհատական բնակելի տուն	2,144	61	10.0%	2.8%	103	8.7%	4.8%
3	Արտադրական նշ. շին.	173	37	6.1%	21.4%	43	3.6%	24.9%
4	Հասարակական նշ. շին.	572	61	10.0%	10.7%	119	10.1%	20.8%
5	Ավտոտնակ	1,200	14	2.3%	1.2%	319	27.0%	26.6%
6	Հող	6,504	405	66.7%	6.2%	128	10.8%	2.0%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	3,172	240	39.5%	7.6%	84	7.1%	2.6%
Ընդամենը		14,008	607	100.0%	4.3%	1,182	100.0%	8.4%

Աղյուսակ 3.4-4-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ եռամսյակի նկատմամբ:

Աղյուսակ 3.4-4


	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք				Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք						
	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ		
1	Բնակարան	67	-56.7%	29	93.3%	15	622	-24.4%	470	-23.6%	615
2	Անհատական բնակելի տուն	47	29.8%	61	1.7%	60	61	68.9%	103	43.1%	72
3	Արտադրական նշ. շին.	37	0.0%	37	23.3%	30	39	10.3%	43	19.4%	36
4	Հասարակական նշ. շին.	69	-11.6%	61	-1.6%	62	108	10.2%	119	22.7%	97
5	Ավտոտնակ	17	-17.6%	14	75.0%	8	207	54.1%	319	49.1%	214
6	Հող	404	0.2%	405	5.2%	385	95	34.7%	128	1.6%	126
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	255	-5.9%	240	-8.4%	262	54	55.6%	84	27.3%	66
Ընդամենը		641	-5.3%	607	8.4%	560	1,132	4.4%	1,182	1.9%	1,160

3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2023 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի 1,097 առուվաճառքի գործարքների կողմ են հանդիսացել օտարերկրյա քաղաքացիները, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 7.8 %-ը:


Առուվաճառքի գործարքներից 370-ի դեպքում օտարերկրյա քաղաքացիները հանդիսացել են միայն գնորդ, 688-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 39 առուվաճառքի գործարքի դեպքում երկու կողմն էլ հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիներ:


Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2023 թվականի չորրորդ եռամսյակում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը:



Արդյունքում 2023 թվականի չորրորդ եռամսյակում օտարերկրյա քաղաքացիները գնել են 409 միավոր անշարժ գույք և վաճառել են 727 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2023 թվականի չորրորդ եռամսյակում գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.5-3-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.





Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը առուվաճառքների գործարքներում ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Աղյուսակ 3.5-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	3,611	190	46.5%	5.3%	217	29.8%	6.0%
Արագածոտն	1,230	28	6.8%	2.3%	39	5.4%	3.2%
Արարատ	1,415	26	6.4%	1.8%	95	13.1%	6.7%
Արմավիր	1,585	32	7.8%	2.0%	96	13.2%	6.1%
Գեղարքունիք	556	20	4.9%	3.6%	36	5.0%	6.5%
Լոռի	895	12	2.9%	1.3%	66	9.1%	7.4%
Կոտայք	2,721	58	14.2%	2.1%	98	13.5%	3.6%
Շիրակ	577	15	3.7%	2.6%	27	3.7%	4.7%
Սյունիք	512	3	0.7%	0.6%	17	2.3%	3.3%
Վայոց Ձոր	316	4	1.0%	1.3%	10	1.4%	3.2%
Տավուշ	590	21	5.1%	3.6%	26	3.6%	4.4%
Հանրապետություն	14,008	409	100.0%	2.9%	727	100.0%	5.2%

Աղյուսակ 3.5-2-ում ներկայացված է 2023 թվականի չորրորդ եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2023 թվականի երրորդ և 2022 թվականի չորրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-2

	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ	2022 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի չորրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երրորդ եռամսյակ
Երևան	319	-40.4%	190	-12.0%	216	267	-18.7%	217	6.9%	203
Արագածոտն	14	2.0 անգամ	28	12.0%	25	27	44.4%	39	-25.0%	52
Արարատ	26	0.0%	26	44.4%	18	98	-3.1%	95	8.0%	88
Արմավիր	27	18.5%	32	45.5%	22	72	33.3%	96	10.3%	87
Գեղարքունիք	4	5.0 անգամ	20	2.2 անգամ	9	31	16.1%	36	63.6%	22
Լոռի	18	-33.3%	12	-53.8%	26	64	3.1%	66	3.1%	64
Կոտայք	70	-17.1%	58	-17.1%	70	113	-13.3%	98	-31.9%	144
